ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.06.2016թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 92-ը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ. Իսախանյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:

/Զեկ.՝ գյուղ. և բնապահպան.վարչ. պետ Հ.Տերետերյան /

2. Մարզի համայնքների 2016թ. հինգ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ.՝ ֆին. և սոցիալ-տնտ. զարգ. վարչ.պետ Գ.Եղիազարյան /

3. 2016թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

/ Զեկ.՝ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետ Ա. Լալայան/

4. Մարզի մթերող կազմակերպությունների կողմից մթերված բերքի դիմաց գյուղացիական տնտեսություններին չվճարված գումարների վճարման վերաբերյալ:

/Զեկ.՝ ՀՀ Արարատի մարզպետ Ռ. Աբրահամյան/

1. **Լսեցին՝**

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերետերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը , համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալներ Ա. Վարդանյանին և Հ. Բաբայանին՝

● ուսումնասիրել և 5 օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրում>> ծրագրով մարզի համայնքներում իրականացվող աշխատանքների վերաբերյալ, ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացնել առաջարկություններ:

գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանին՝

● ՋՕԸ-երի հետ համատեղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին ՝

● հնարավորինս աջակցել հողօգտագործողներին , համայնքներում առաջացած խնդիրների լուծման նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ :

2.Լսեցին՝

Մարզի համայնքների 2016թ. հինգ ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ի. Շադյանին ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին ՝

● ըստ հարկատեսակների վարձավճարների գանձման ցածր ցուցանիշ ունեցող համայնքների ղեկավարների հետ քննարկել և 3 օրյա ժամկետում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ վարձավճարների գանձման մակարդակը

բարձրացնելու համար, 2016 թվականի հուլիսի 6-ին կազմակերպվելիք քննարկմանը տվյալներն ամփոփելու նպատակով ներկայացնել տեղեկատվություն :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ըստ հարկատեսակների վարձավճարների գանձման և հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու ուղղությամբ:

3.Լսեցին՝

2016թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ. Աբրահամյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ. Իսախանյանը:

Հանձնարարվեց

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանին՝

- հետևողական լինել մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված թերությունների վերացման գործում:

4. **Լսեցին՝**

Մարզի մթերող կազմակերպությունների կողմից մթերված բերքի դիմաց գյուղացիական տնտեսություններին չվճարված գումարների վճարման վերաբերյալ մարզպետ Ռ. Աբրահամյանի զեկույցը:

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանին ու գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանին՝

- ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել գյուղացիական տնտեսությունների և մթերող կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքման գործընթացը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին ՝

- հնարավորինս աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ պայմանագրերի կնքման գործում:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ռ. Աբրահամյանը :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ